

ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ Նոր Զուղա, Խաչատուր Կեսարացի, Պարսկաստան, համալսարան, գրադարան, տպարան, գիրք, դպրոց:

Keywords: New Jugha, Khachatur Kesaratsi, Persia, university, library, printing house, book, school.

Նախաբան

Գիտության զարգացման արդի փուլում, երբ համացանցը հնարավորություն է ընձեռում հասու դառնալու աշխարհի տարբեր անկյուններում տեղի ունեցող հասարակական-քաղաքական, գիտակրթական, մշակութային և այլ զարգացումներին, գրադարանը՝ որպես գրի ու գիտելիքի շտեմարան, չի կորցնում իր հետաքրքրությունն ու արդիականությունը: Գրադարաններում կազմակերպվող գրական-գեղարվեստական, հոբելյանական և այլ բնույթի միջոցառումները, գրքերի շնորհանդեսները գրավիչ են հասարակության տարբեր խավերի, մանավանդ գրասեր երիտասարդության համար: Ընթերցասրահներն այսօր էլ պահանջարկ ունեցող վայրեր են, որտեղ հնարավոր է ոչ միայն ձեռք բերել անհրաժեշտ գրականություն, այլև տրամադրող մթնոլորտում նորանոր գիտելիքներ ձեռք բերել: Նշված հանգամանքները փաստում են գրադարանի հաստատության արդիականությունն ու անփոխարինելիությունը:

«Գրադարանները մարդկային ընկերության ընտրելագոյն տեսակներն են: Գրադարանները պանթեոն չեն, ո՛չ փառքի նշաններ, ո՛չ անունի փայլեր, այլ կենսալի բաներ, լոյսեր՝ առարկայական, խօսուն, ճառագայթուն: Գրադարանները կեանքի, գաղափարի, զգացումի նուագախումբ մըն են, որ սակայն նուագողի մատներուն և շրթներուն, խմբավարի ճպոտին կը կարօտի՝ դառնալու համար ձայն ու համանուագ», – ահավասիկ գրադարանի ամփոփ բնութագիրը, որը կատարված է Գարեգին Քեսապցի կաթողիկոսի գրչով [Սարգիսեան, 1990, 63]:

Կրթօջախը, տպարանը և գիրն ու գիրքը որպես գրադարանի հաստատության կայացման անհրաժեշտություններ

Գրադարանի հաստատության կայացման համար անհրաժեշտ է երկու կարևոր նախադրում՝ ա) կրթօջախ, բ) տպարան և տպագրության արդյունք՝ գիրք:

ա) **Կրթօջախ:** 1831-1853 թթ. *Նոր Զուղայի Վանքի վանահայր* Խաչատուր Կեսարացին բացում է վանքապատկան դպրոց, որը ժամանակակիցներն անվանում էին «համալսարան»: Ուսումնական այս հաստատությանը հաջորդում են «Ս. Կատարինեան ազգային օրիորդաց» (1858 թ.), «Ազգային կեդրոնական», «Գևորգ Քանանեան» իգական և բազմաթիվ ու բազմանուն այլ դպրոցներ («Հայկեան հայրենասիրական», «Մարիամ Յարութիւնեան», «Գևորգ Յովսէփեան», «Մարգար Սուքիասեան» և այլն): «Բացի յիշեալ դպրոցներից, զանազան ժամանակներում, մասնաւոր քահանաների տներում ևս լինում են փոքրիկ խալիֆայական դպրոցներ, ուր ուսումնաձարաւ երեխաները յաճախում են փոքր ի շատէ գրել-կարդալ և եկեղեցական փոխեր սովորելու» [Աբգարեանց, 1914, 18]:

Ներկայում Նոր Զուղայում գործում են նախկինում «Կեդրոնական», այժմ «Արմէն» վերանվանված հայկական տարրական, երկսեռ, «Քանանեան» իգական և «Կատարինեան» արական դպրոցները: Բացվում է «Ալենոյշ Տերեան» մշակութային կենտրոնը: Հայերին պատկանող հողատարածքների վրա կառուցվում է Իսպահանի պետական համալսարանը, իսկ «Գալուստ Գիւլբենկեան» հիմնադրամի միջոցներով՝ համալսարանի հայագիտության մասնաշենքը: Սպահանի պե-

տական համալսարանի ծրագրում ներառված են հայոց լեզու և գրականություն, տաղաչափություն, հայ ժողովրդի պատմություն, հայ բանահյուսություն, հայոց աղբյուրները պարսիկների և Պարսկաստանի մասին, ինչպես նաև հայագիտական այլ առարկաներ:

Օտարերկրյա գրոսաշրջիկներին գրավող մշակութային կենտրոն է «Ս. Ամենափրկչեան Վանքի թանգարանը», որը 2012 թ. վերանվանվում է «Խաչատուր Կեսարացի թանգարան»: Բազմաթիվ այցելուներ ունեցող մշակութային այս կենտրոնում ապաստան են գտել տարագիր հայության բնօրրանից բերած, ինչպես նաև *Նոր Ջուղայում գրված* ձեռագրերը, տեղի հայ վաճառականների մեկենասությամբ հրատարակված բազմաթիվ գրքեր: Եզակի ձեռագրերից բացի, ցուցադրված են հինգ հնատիպ գրքեր՝ 1513 թ. Վենետիկում Հակոբ Մեղապարտի տպագրած «Պատարագատետրը», 1641-1642 թթ. Նոր Ջուղայում Խաչատուր Կեսարացու հրատարակած «Հարանց վարքը» և «Ժամագիրքը», 1666 թ. *Ամստերդամում* Ոսկան Երևանցու լույս ընծայած «Աստուածաշունչը» և 1794 թ., Մադրասում Հարություն քահանա Շմավոնյանի հիմնադրած «Ազդարարը»:

Նշված կրթարաններին կից գործում էին տարբեր մեծության գրադարաններ, որոնցում պահվում էին արժեքավոր գրքեր և եզակի տպագրություններ:

բ) **Տպարան:** Գրադարանի գոյության նախապայման է տպարանը և տպագրական գործը, որոնց ստեղծմանը մեծապես նպաստում է Նոր Ջուղայի հայությունը:

Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Առաջինը հայ գրքի մայրաքաղաքների շարքի յոթերորդ հորիզոնականում նշում է Նոր Ջուղան՝ վստահեցնելով, որ «այլ հայ գաղութներ անմասն պիտի չմնային հայկական տպարան հիմնելու համընդհանուր շարժումին» [Քելիշեան, 2012]:

1637 թ. Նոր Ջուղայի Ս. Ամենափրկիչ վանքի վանահայր Խաչատուր Կեսարացին, ունենալով իր արժանավոր համերկրացու՝ հայ տպագրության հիմնադիր Հակոբ Մեղապարտ-Ջուղայեցու փորձը, հիմնում է Պարսկաստանի և Միջին Արևելքի առաջին տպարանը (1636-1972), որի տառատեսակները և տպագրական մամուլը պատրաստում է Հակոբջան Ջուղայեցին: 1639 թ. Կեսարացին Հովհաննես Ջուղայեցի Քթոշենցիի ուղարկում է Եվրոպա՝ տպագրության արվեստի մեջ հմտանալու և տպագրական միջոցներ ձեռք բերելու: Նա ուղևորվում է Վենետիկ, ապա Հռոմ, որտեղ ձուլել է տալիս հայերեն տառեր: **Նոր Ջուղայի տպարանի կատարելագործմանը մեծապես օժանդակում է նաև Ոսկան Ջուղայեցի-Երևանցին¹:**

«Տպագրութիւնը ազգի մը քաղաքակրթութեան զարգացման հիմնական լծակներէն մէկն է: Տպարանի մամուլի խժալուր ձայնը քաղաքակրթութեան համերգին նախերգանքն է: Մեզ համար պատիւ է, որ մեր հայրերը իրենց գերագոյն աստիճանի ջանքերով, երբեմն հայկական նախանձախնդրութեան, զոհողութեան ոգիի արտայայտութիւն եղող հերոսական նուիրումով հեռաւոր Վենետիկի, Ամստերդամի, Լվովի, Լիվոռնոյի, Հռոմի, Մարսելյի խունացած տպարանական գործատեղիներու մէջ հայ գիրք են տպել 1512 թուականէն սկսեալ եւ հետզհետէ տպարանի անիւները դարձուցեր հասցուցեր են դէպի Պոլիս ու Կալկաթա եւ ի Հայաստան», - գրում է Ամենայն հայոց երանաշնորհ հայրապետ Գաբրիէլ Քեսապցին փերիահայ անվանի մտավորական Լևոն Մինասեանի «Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը» աշխատության առաջաբանում [Մինասեան, 1972, 6]:

Նոր Ջուղայում ստեղծված գրականության և գրադարանների մասին

Ջուղայի հայերը ամենայն բարեխղճությամբ գույքագրել, ցուցակագրել նաև նկարագրել են բնօրրանից բերած ձեռագրերն ու հնատիպ գրքերը, ապա նաև նոր բնակատեղիում տպագրած գրքերը: Այս առումով նշանակալից են փերիացի մտավորական, Ս. Ամենափրկիչ վանքի թանգարան-տպարանի երբեմնի տնօրեն Լևոն Մինասյանի ավելի քան ութսուն հայերեն և պարսկերեն աշխատությունները, որոնցից երեսունհինգը նվիրված է Նոր Ջուղայի և Փերիա գավառի պատմությանը, ազգագրությանը, լեզվին և բազմաթիվ այլ հարցերի: Նշանակալից են այս հեղինակի «Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972)», «Մոդերն» տպարանը եւ իր տպագրած գրքերը 1922-1982», «Հայ տպագիր գիրքը Իրանում 1638-2000» (2001), «Մատենագիտա-

¹ Ոսկան Երևանցին ծնվել է Նոր Ջուղայում: Երևանցի է կոչվել ծնողների ծննդավայրի անունով:

կան ցանկ Սպահանի հայոց թեմի նվերաբերող հայերեն, պարսկերեն եւ անգլերեն գրքերի ու յօդ-ւածների» (2007), «Իրանի առաջին տպարանը և Սպահանի տպարանների ցանկը» (2000) աշխատությունները, որոնք սպառիչ տեղեկություններ են հաղորդում տպարանի բազմամյա գործունեության և արժեքավոր արտադրանքի մասին [Տեր-Աւետիսեան, 1970]:

Հիմնադրումից մեկ տարի հետո տպարանը տալիս է իր երախայրիքը՝ «Սաղմոսարանը» (1638), որին հաջորդում են՝ «Հարանց վարք» (1641), «Խորհրդատետր» (1641), «Ժամագիրք ատենի» (1642), «Պարզայ տումար» (1647), «Աստուածաշունչ» (1650), **Աղեքսանդր Ջուղայեցու** «Գիրք ատենական, որ ասի վիճաբանական» (1687), «Գիրք ժողովածոյ ընդդէմ երկաբնակաց» (1683), **Հովհաննես Ջուղայեցու** «Գիրք համառօտ վասն իսկապէս և ճշմարիտ հաւատոյ» (1688) և այսպէս շարունակ՝ ավելի քան 400 անուն գիրք:

Եվ այսպէս՝ դպրոց, տպարան, գիրք եռաչափ հիմքով ստեղծվում են Նոր Ջուղայի գրադարանները՝ դառնալով ապահով ապաստան հայության հոգեմտավոր ճգնության արգասիքի՝ կրոնական, դավանաբանական, բարոյախրատական, պատմական, տեղագրական, բանահյուսական, գեղարվեստական և այլ բնույթի բազմաբովանդակ հրատարակությունների համար: Բազմաթիվ գրքեր հանգրվանում են գյուղական դպրոցների գրադարաններում, նաև անհատ գրասերների պահարաններում: Գյուղական գրադարանները ժամանակի ընթացքում կազմալուծվում են, գրքերը անցնում են ձեռքից ձեռք, քանի որ գյուղաբնակները տեղափոխվում են քաղաքներ: Գյուղերը աստիճանաբար մարում են, դառնում են ամառանոցներ, դպրոցները փակվում են, որոնց գրադարաններում էին գտնվում նաև պապերի՝ բնօրրանից բերած արժեքավոր հնատիպ գրքերը և գրչագրերը:

Նոր Ջուղան այսօր ունի **երեք մեծ գրադարան**:

Առաջինը XVIII դարի սկզբում Վանքի տարածքում հիմնադրված գրադարանն է, որը 1974 թ. ի պատիվ Ս. Ներսէս Շնորհալու մահվան 800-ամյակի, վերանվանվում է «Ս. Ներսէս Շնորհալի Մատենադարան»: Մատենադարանում պահվում է կրոնական, պատմական և այլ բնույթի մոտ 750 մանրանկարազարդ ձեռագիր, որոնցից քառասունչորսը՝ մագաղաթյա. ամենահինը X դարից ավանդված մի Ավետարան է:

1986թ. Արբակ Մխիթարյանի և Սիրարփի Տեր-Ներսիսյանի ջանքերով Բելգիայում տպագրվում է Նոր Ջուղայի Վանքի գրչագրերի գունագարդ ալբոմը՝ Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոսության մեկենասությամբ: Գրչագրերը գրված են Արևմտյան Հայաստանում X-XVI դարերում: Նոր Ջուղայի ձեռագրերը պատկանում են XVII դարասկզբին: «Ս. Ներսէս Շնորհալի» գրադարան-մատենադարանը ներկայում ունի շուրջ քսանհինգ հազար հայերեն և օտարալեզու գրքեր, ինչպէս նաև մամուլի հարուստ հավաքածու:

Երկրորդ կարևոր գրադարանային կենտրոնը պատկանում է համալսարանի հայագիտության բաժնին, հայերեն գրքեր կան նաև պետական համալսարանի հանրային կենտրոնական գրադարանում: Համալսարանի գրադարանում առանձնապէս ուշագրավ են հայագգի տարբեր հեղինակների՝ Խորհրդային Հայաստանի քաղաքացու համար նախկինում անհասանելի գրականությունը՝ Ս. Վրացյանի «Կեանքիս ուղիներով» վեցհատորյակը, «Հայաստանի Հանրապետությունը», Կ. Սասունու «Պատմութիւն Տարօնի աշխարհի», ինչպէս նաև Ճորոխի ավագանին, Խոտրջուրին, Բաղեշին, Եվդոկիային, Ջմյունիային, Բալուին, Արդահանին, Չարմահալին, Ղարաղանին, Վերին Չանախչին, Շապին Գարահիսարին և բազմաթիվ այլ հայաբնակ վայրերին նվիրված մենագրությունները:

Գրադարանային **երրորդ** նշանակալից կենտրոնը գտնվում է «Արարատ» միության շրջափակի մեջ, որը դարձել է ազգային, կրթամշակութային հավաքատեղի վերջին տարիներին Փերիայից, Չարմահալից, Բուրվարից տեղափոխված և Նոր Ջուղայում բնակություն հաստատած հայերի համար:

Նոր Ջուղայի հարուստ գրադարաններում պահվող գրականության ցանկում զիտագործնական առանձնակի նշանակություն ունեն վերջին տարիներին տպագրված բարբառագիտական մենագրությունները, հատկապէս Փերիայի, Չարմահալի, Բոլորմակի և պարսկահայ այլ խոսվածքներին նվիրված արժեքավոր հրատարակությունները: Այս առումով ուշագրավ են Լևոն Մի-

նասյանի՝ Ջուղայի բարբառին և Փերիայի խոսվածքին նվիրված հրատարակությունները, Տիգրան Թ Աբգարեանցի «Նոր-Ջուղայի անգիր գրականությունը» (1966) և այլն:

Այս շարքը վերջին տարիներին համարվել է **Արամ Երեմյանի** «Սպահանի Չարմահալ գաւառը», **Հիլդա Մարգարյան-Ալեքսանդրյանի** «Բարով, քա դորաս», **Հայկ Մարյանի** «Փերիայի բարբառ» և բարբառային այլ աշխատանքներով:

Այսպիսով, Նոր Ջուղայի գրադարաններում է ամփոփված հայ ժողովրդի հոգեմտավոր ճգնության ծանրակշիռ մի մասը, և հարկ է, որ հայագիտությամբ զբաղվող յուրաքանչյուր գրասեր մտավորական մոտիկից ծանոթ լինի ձեռագիր և տպագիր այդ հարստությանը: Ներկայում գիտական այդ շտեմարանը հետաքրքրություն է ներկայացնում հատկապես օտարերկրյա զբոսաշրջիկների և տեղի դպրոցականների համար:

SUMMARY

Based on personal observations, we presented the libraries of New Jugha, which were created at three important bases.

a) Educational center. In 1831, KhachaturKesaratsi opened a monastery school, on the basis of which many schools were created. At present, there are “Armen,” “Kananyan,” “Katarinyan” schools, the Department of Armenian Studies of the University.

b) Typography. In 1637, Kesaratsi founded the first printing house in Persia, which printed educational, theological, moral, historical and folklore books.

c) A book. The Armenians of Jugha listed the manuscripts and books they brought from their homeland, as well as the books printed in their new place of residence.

Today there are three basic libraries in New Jugha: 1) the monastery library, 2) the state university library, 3) the “Ararat” union library, where there are also valuable dialectological monographs.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբգարեանց Տիգրան, Նոր Ջուղայի դպրոցները, Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկչեան Վանքի, 1914, 56 էջ: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://www.abcarians.com/images/NJschools.pdf>, 18.12.2022:
2. Մինասեան Լևոն, Նոր Ջուղայի տպարանն ու իր տպագրած գրքերը (1636-1972), Նոր Ջուղա, տպարան Ս. Ամենափրկիչ Վանքի, 1972, 173 էջ: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://serials.flib.sci.am/matenagitutyun/Nor%20Juxayo%20tparan@/book/content.html>, 17.12.2022:
3. Միրզախանեան Արամայիս, Հայ տպագրութեան 500-ամեակը և Նոր Ջուղայի հայոց տպարանի դերը, Ստոկհոլմ, 2012: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: www.aaeurop.com/?p=11870, 18.12.2022:
4. Մկրտչյան Կարեն, Իրանահայության ժողովրդագրության հարցերը 2000-ական թվականներին // «Բանբեր հայագիտության», Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021, N 1 (25), էջ 73-85: [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <http://haygithimnadram.am/journals.php?p=2&arch=&id=&langid=1>, 18.12.2022:
5. Մարգիսեան Գարեգին, Հայ մարդը՝ Հայ գիրքին դիմաց..., Անթիլիաս, 1990, 150 էջ:
6. Տէր-Աւետիսեան Ս., Յուցակ հայերէն ձեռագրաց Նոր Ջուղայի Ամենափրկիչ Վանքի, Հտր. Ա.: Վիեննա 1970, 940 էջ:
7. Քէշիշեան Արամ, Վատիկանի ձայնասփիւռ, 2012՝ Հայ գիրքի տարի հռչակուած Արամ Ա. Կաթողիկոսէն [Էլեկտրոնային հրատարակություն] URL: <https://westernprelacy.org/hy/2012-year-of-the-armenian-book-pontifical-message-of-his-holiness-aram-i-armenian/>, 17.12.2022: